

12.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/2Հ գնման պայմանագրի  
ք. Երևան

12.03 2025թ.

«Քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Քլջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 20.02.2025 թ. N 192-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Էս. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի N1 վարժարան» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Լոռու մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գագարինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման, ՀՀ Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» նոր մարզադահլիճների կառուցման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 12.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-22/2Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2025 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է երկու էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մաս: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
Աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011034486, 900011034494,  
900011034502, 900011034510, 900011034528,  
900011034551, 900011034536  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

**Կ Ա Տ Ա Ր ՈՂ՝**

«ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ  
ք. Երևան, Շերամի փող. 38/5  
«Ինեկոբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2050422305861002  
ՀՎՀՀ 00169494

Տնօրեն՝

  
Գ. Եղիազարյան  
(ստորագրություն)  


  
Ա. Քլջյան  
(ստորագրություն)  




